րել զժողովուրդն յետս կալ ՚ի նոցանէ, և ճանաչել մայր եւ դահեակ ինքեանց զԱթոռ Ս. Լուսաւորչին։ Լուեալ զլսաւորաց ազգին զայսպիսի խռովայոյզ և երկպառակիչ բանս վարդապետաց էջմիածնի՝ բողոք կարդացին առ Արքայ եւ դրեալ զիր ամբաստանութեան առաքեցին յԱդրիանուպօլիս, հանել զնոսա ՚ի սահմանաց Օսմանեան Պետութեան. զի մի անկցի խռովութիւն ՚ի մէջ ժողովրդոց, զի անվթար կարասցեն վճարել զհարկն Տէրութեան. եւ զի մի՛ վարդապետք Պարսկաստանի, որ առանց հրամանի Տէրութեան չրջին այսր և անդր, ճանճրացուսցեն զժողովուրդն՝ պատճառանօք բաժանելոյ զմիութիւնն. բռնի պահանջել զյոլով դրամս, և զայլ սոյնպիսի անկարգութիւնս, որք յաճախեալ էին ՚ի մէջ ազգին ՚ի սմին ժամանակի։ Գրեցաւ հրովարտակ հրամանաւ Արքային Մեհէմմէտի առ դատաւորս քաղաքաց քաղաքաց, և ՚ի Կոստանդինուպօլիս, բառնալ զանկարգութիւնս նուիրակաց, և չբաժանել զմիութիւնն առանց կայսերական հրամանի. եւ եթէ ոչ կամիցին խաղաղութեամբ դառնալ յաշխարհն իւրեանց, գործել ըստ տրամադրութեան օրինաց։

Իսկ Մարտիրոս վարդապետ, որ էր յայնժամ ՚ի թադաւորեալ քաղաքի անդ՝ յորդորեալ ՚ի բազմաց՝ գնաց յերկիր իւր ՚ի Կաֆա, որպէս զի մարթասցի ՚ի ձեռն Թաթար Խանին, որում էր սիրելի՝ հանեցուցանել զեպարքոսն վասն դարձուցանելոյ զվիճակն Հայոց՝ որ յերուսաղէմ. Գրեաց Թաթար Խանն վասն այսր գիր աղերսական և յորդորական առ Բիշօպրիւլիս Եպարքոսն, այլ նա ամենեւին անտես արար զաղաչանս նորա։ Ուստի և Յոյնք վրատահութիւն առեալ դիմեցին առ Թիւրք Օղլու, որոյ ՚ի ձեռս էր փականք Ս. Յակոբայ, և տուեալ նմա բազում ինչ՝ առին զայն և եկեալ յերուսաղէմ յաւուրս Պենտէկոստէից և տիրաբար ՚ի բաց վարեալ զՀայս, որք տակաւին մնացեալ էին իբր թաքուն ՚ի վանս Ս. Յակոբայ, դատարկեցին զամենայն անօթս և զսպասս եկեղեցւոյն և դարպասիցն և սենեկաց, և բնակեցուցին զՀայս ՚ի Թաղն Փոչ կոչեցեալ, և ոչ թողուին նոցա ելեւմուտ առնել ՚ի Ս. Յակոբ բնդ մեծ դուռն, այլ բացին դուռն մի փոքր բնդ կողմն իջեւանացն, զի բնդ այն մտցեն և ելցեն, և եղեւ տըրտ-